ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 17» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-11/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի 02.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 02.02.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովը էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով 04.12.2015թ. հայտարարել է «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 15-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.2 կետի համաձան՝ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, 3-րդ կետի համաձայն՝ բոլոր չափաբաժինների մասով (առաջին և երկրորդ) առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն, որպես առավել ցածր գին ներկայացրած մասնակից, իսկ առձանագրության 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչեւ 5-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

21.12.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ահազանգել է երկրորդ տեղ զբաղեցրած «Ռոյալ Կոմֆորտ» ՍՊԸ-ն և հայտնել, որ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և խնդրել է դադարեցնել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2015թ. դեկտեմբերի 21-ին ժամը 16:30-ին հրավիրված նիստով որոշել է կրկին անգամ վերանայել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից երկու չափաբաժինների մասով ներկայացրած տեխնիկական բնութագրերը և դրա արդյունքում նույն նիստի ժամանակ որոշել է մերժել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը:

Ինչպես «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն տեղեկացել է հետագայում, խնդիրը կայանում էր հետևյալում.

ա. «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգի հրավերով առաջին չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի համաձայն պահանջվել է մատակարարել «Օդորակիչ , 18000 BTU (օդորակիչ, 18000 BTU հզորությամբ, որը նախատեսված է մինչև 60մ2 տարածքում ջերմստիճանի ավտոմատ կարգավորման համար, առավելագույն սպառվող հզորությունը՝ 1.8 կՎտ, հզորությունը

սառեցման ռեժիմում նվազագույնը՝ 5.2կՎտ, հզորությունը տաքացման ռեժիմում նվազագույնը՝ 5.5կՎտ)»:

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից որպես 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր առաջարկվել է «Օդորակիչ «MISTERY MSS18R08» 1800 BTU հզորությամբ, որը նախատեսված է մինչեւ 60մ2 տարածքում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համար առավելագույն սպառվող հզորությունը՝ 1.8կՎտ, հզորությունը սպառեցման ռեժիմում՝ 5.1կՎտ, հզորությունը տաքացման ռեժիմում նվազագույնը՝ 5.8կՎտ):

բ. «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգի հրավերով երկրորդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի համաձայն պահանջվել է մատակարարել «Օդորակիչ, 9000 BTU (Օդորակիչ, 9000 BTU հզորությամբ որը նախատեսված է մինչեւ 30մ2 տարածքում ջերմսատիճանի ավտոմատ կարգավորման համար առավելագույն սպառվող հզորությունը 0.9 կՎտ, հզորությունը սառեցման ռեժիմում՝ նվազագույնը 2.7 կՎտ, հզորությունը տաքացման ռեժիմում նվազագույնը՝ 3.3կՎտ)»:

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից որպես 2-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագիր առաջարկվել է «Օդորակիչ «MISTERY MSS09R01» 9000 BTU հզորությամբ, որը նախատեսված է մինչեւ 30մ2 տարածքում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համար առավելագույն սպառվող հզորությունը՝ 0.9կՎտ, հզորությունը սպառեցման ռեժիմում՝ 2.5կՎտ, հզորությունը տաքացման ռեժիմում՝ 3կՎտ):

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն, որպես բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները, նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտանբերված անհամապատասխանությունները:

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն գտնում է, որ «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ՀՀ կառավարության 10.02.2011թ N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գոծընթացի կազմակերպման » կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի և 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, քանի որ 2015թ. դեկտեմբերի 21-ին ժամը 16:30 հրավիրված նիստի «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ մերժելով «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը, այդ նիստին կայացրած որոշմամբ ընդհանրապես չի հիմնավորել, թե ինչու է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը մերժվել, այլ ընդհամենը նշել է, որ կրկին անգամ վերանայել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից երկու չափաբաժինների մասով ներկայացրած տեխնիկական բնութագրերը, և դրա արդյունքում նույն նիստի ժամանակ որոշել մերժել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը նշել է նաև, որ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն հայտը մերժելու հիմքերի մասին տեղեկացել է հետագայում՝ բանավոր կերպով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը , հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար եւ մերժվում են»:

ՀՀ կառավարության 10.02.2011թ N 168-Ն որոշմամբ հաստատված հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ,

պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Նույն կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերին ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաեւ սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 52-րդ կետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

- շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակիցը.

- չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթերի ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ըստ Ընկերության՝ եթե «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրում «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել էր հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ապա «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր Կարգի 51-րդ կետի համաձայն՝ նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցեր առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկվեր, ապա միայն նոր այդ դեպքում նույն կարգի 52-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի որոշմամբ հայտը պետք է մերժվեր և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Սակայն «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտելով Կարգի 51-րդ և 52-րդ կետերի պահանջները և՝ առանց

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին տալու արձանագրված (չնայած հանձնաժողովի նիստի արձաանագրությամբ փաստորեն կոնկրետ անհամապատասխանություններ չեն էլ արձանագրվել) անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու հնարավորություն, ապօրինի մերժվել է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը:

Արդյունքում «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն ոչ միայն ապօրինի դուրս է մնացել «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով ընթացակարգից և զրկվել հաղթած չափաբաժիններով ապրանքը մատակարարելու հնարավորությունից, այլ նաև իբրև թե կեղծ տվյալ ներկայացնելու հիմքով, հայտնվել է www.gnumner.am կայքում հրապարակված Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը սահմանափակված մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդը իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. <u>ՀՀ Ազգային ժողովի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ Ազգային ժողովը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.02.2017թ. թիվ Ա-84 գրությամբ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

ՀՀ ԱԺ աշխատակազմի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 4-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հրավերի բացումը տեղի է ունեցել 2015թ. դեկտեմբերի 15-ին: Ընթացակարգին հայտ էին ներկայացրել երկու կազմակերպություն՝ «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ն և «Ռոյալ Կոմֆորտ» ՍՊԸ-ն, որի արդյունքում նվազագույն գնային առաջարկ են ներկայացրել համապատասխանաբար վերոնշյալ կազմակերպությունները:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստացի առաջարկվող ապրանքների՝ օդորակիչների անվանումները և տեխնիկական բնութագրերը տարբերվում էին Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից: Մինչ հանձնաժողովի տեխնիկական բնութագրերի ուսումնասիրության ամփոփիչ եզրակացություն ներկայացնելը՝ «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից բազմիցս հեռախոսային զանգեր տեղի ունեցան: Հասկանալով, որ մեր հայտարարած և իրենց ներկայացրած տեխնիկական բնութագրերում տարբերություններ կան՝ բանավոր հավաստում էին, որ իրենց կողմից մատակարարվող ապրանքները համապատասխանում են և դեռ ավելին՝ դրանք վերջին արտադրության մոդելներ են և նույնիսկ նիստի կասեցման արդյունքում, որով պետք է շտկում կատարի՝ ներկայացնելու է նույն փաստաթղթերը:

Նիստի ժամանակ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված և էլեկտրոնային կայքերից արտահանված մոդելների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են միմյանց, իսկ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերի միջև տարբերությունը կազմում է ընդամենը ±0.5%: Արդյունքում հանձնաժողովը որոշեց հաղթող ճանաչել «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ին և սահմանել անգործության ժամկետ:

Անգործության ժամկետի ընթացքում՝ 17.12.2015թ., «Ռոյալ Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից պահանջ է ներկայացվել՝ ստանալ «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով հրավերով «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի անվանման և տեխնիկական բնութագրերը պարունակող փաստաթղթի մասին տեղեկատվություն, ինչն էլ հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացվել է վերջինիս:

18.12.2015թ. «Ռոյալ Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է պատասխան գրություն, որում խնդրում են անվավեր ճանաչել Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել իրեն՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին հիմնավորելով, որ 18000 BTU և 9000 BTU օդորակիչների

հզորությունը սառեցման ռեժիմում չեն համապատասխանում նվազագույն պահանջներին: Միաժամանակ «Ռոյալ Կոմֆորտ» ՍՊԸ-ն հայտնել է, որ անվավեր չճանաչելու պարագայում բողոքարկելու է գնման գործնթացը: Վերջինիս կապակցությամբ Հանձնաժողովը 21.12.2015թ. ժամը 16:40 լրացուցիչ նիստ հրավիրեց և վերանայեց փաստաթղթերը՝ չփոխելով կարծիքը, սակայն, հիմք ընդունելով գնումների մասին օրենսդրության պահանջները, մերժեց «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և 2-րդ տեղ զբաղեցնող «Ռոյալ Կոմֆորտ» ՍՊԸ-ին առաջարկվեց ներկայացնել օդորակիչների անվանումները և տեխնիկական բնութագրերը, միաժամանակ, հաջորդ նիստի օր սահմանելով փաստաթղթերի (տեխնիկական բնութագրերի) ներկայացման օրը: Հանձնաժողովի նման որոշումը պայմանավորված էր տարեվերջին առկա ժամկետների սղությամբ (պայմանագրի կնքում, ապրանքի մատակարարում և տեղադրում, ինչպես նաև ֆինանսավորում):

Նշենք նաև, որ նույն օրը՝ 21.05.2015թ., «Ռոյալ Կոմֆորտ» ՍՊԸ-ն ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին, ինչի մասին ՀՀ ԱԺ աշխատակազմի համապատասխան բաժինը տեղեկացել է իր պաշտոնական էլեկտրոնային հասցեով: Այդ ընթացքում շարունակելով մրցույթը ինտերնետային կայքով համեմատվել են բողոքարկող կազմակերպության կողմից ներկայացված տվյալները, որը ոչ միայն չի համապատասխանում, այլ «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տվյալներց ավելի ցածր է: Նշենք նաև, որ բողոքարկող կազմակերպության կողմից ներկայացված ապրանքի անվանման մոդելը չի համապատասխանում տեխնիկական բնութագրում նշված տվյալներին, այն ուղղակի արտատպել է մեր Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրից:

Իսկ ինչ վերաբերում է «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ին, ապա նա կարող էր բողոքարկել նույն ժամանակահատվածում, քանի որ մեր կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ նիստի արձանագրությունները, հասանելի են եղել երկու կազմակերպություններին:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ երկու կազմակերպությունների գործողություններն էլ խոչընդոտել են մեր կողմից հայտարարված գնման Ընթացակարգը, որի արդյունքում ապրանքները ձեռք չբերվեցին, գումարը վերադարձվեց պետական բյուջե, իսկ ապրանքներ ձեռք բերելու համար դեռևս գումար չի տրամադրվել:

3. <u>ԳԲԽ-11/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-11/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով 04.12.2015թ. հայտարարել է «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 15.12.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության՝

• 3-րդ կետի համաձայն՝ որոշվել է Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին, իսկ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ռոյալ Կոնֆորտ» ՍՊԸ-ին:

• 4-րդ կետի համաձայն՝ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Ընտրված մասնակիցների հետ պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.12.2015թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության համաձայն՝ ***որոշվել է կրկին անգամ վերանայել*** «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից երկու չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը և ընդհանուր քննարկման արդյունքում որոշվել է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժել և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնի տեխնիկական բնութագիրը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 24.12.2015թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության՝

✓1-ին կետի համաձայն՝ «Ռոյալ Կոնֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը (փաստացի մատակարարվող ապրանքի մոդելը և դրանց տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում միմյանց) չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Որոշվել է «Ռոյալ Կոնֆորտ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

✓2-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները, հանձնաժողովը որոշել է Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չկայացած հայտարարել ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

5. <u>ԳԲԽ-11/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը, ՀՀ Ազգային ժողովի 17.02.2017թ. թիվ Ա-84 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝

իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 35-րդ կետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտանբերված անհամապատասխանությունները:

Նույն կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերին ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաեւ սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 52-րդ կետի համաձայն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

- շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակիցը.
- չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթերի ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցը:

• Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.12.2015թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության համաձայն՝ ***որոշվել է կրկին***

անգամ վերանայել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից երկու չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը և ընդհանուր քննարկման արդյունքում որոշվել է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժել և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնի տեխնիկական բնութագիրը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կենտրոնն, ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2015թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությունը, գտնում է, որ «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի և 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2015թ. դեկտեմբերի 21-ին ժամը 16:30 կայացած նիստով մերժել է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը, սակայն հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ ընդհանրապես չի հիմնավորել, թե ինչու է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը մերժվել, այսինքն մանրամասն չեն նկարագրվել հայտանբերված անհամապատասխանությունները, այլ ընդհամենը նշվել է, որ կրկին անգամ վերանայվել է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից երկու չափաբաժինների մասով ներկայացրած տեխնիկական բնութագրերը, և դրա արդյունքում նույն նիստի ժամանակ որոշվել է մերժել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը, ինչը հակասում է նաև իրավական որոշակիության և կանխատեսելության պահանջներին:

- Ինչպես արդեն նշվել է, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 15.12.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության՝

✓ 3-րդ կետի համաձայն՝ որոշվել է Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին, իսկ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ռոյալ Կոնֆորտ» ՍՊԸ-ին:

✓ 4-րդ կետի համաձայն՝ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Ընտրված մասնակիցների հետ

պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 21.12.2015թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության համաձայն՝ ***որոշվել է կրկին անգամ վերանայել*** «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից երկու չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը և ընդհանուր քննարկման արդյունքում որոշվել է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժել և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնի տեխնիկական բնութագիրը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կենտրոնն, ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերը նշված արձանագրությունները, գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է նաև Կարգի 51-րդ և 52-րդ կետերի պահանջները, քանի որ նախ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, այնուհետև սահմանել է անգործության ժամկետ, որից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.12.2015թ. ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության համաձայն՝ ***որոշվել է կրկին անգամ վերանայել*** «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը և Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, առանց «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում շտկելու հնարավորություն տալու, մերժել է «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետով, 47-րդ կետի 2-րդ ենթակետով, 51-րդ կետով և 52-րդ կետով սահմանված պահանաջները, ուստի առաջարկում ենք «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի 02.02.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել. ապօրինի հայտարարել ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/12-2015» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-11/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան